

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 38

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2009թ. մարտի 13-ին ժամը 10:00-ին ՀՀ Կառավարության
նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
--------------	--

Նիստից բացակայում էին.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Ռուբեն Խաչատրյանը «Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստին հրավիրված էր.

Անդրանիկ Անդրեասյանը ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արտաշես Բախշյանը ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Արամ Ղարիբյանը ՀՀ Վարչապետի խորհրդական

Արա Հովսեփյանը «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն

Նորա Մարտիրոսյանը «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար

Հակոբ Պետրոսյանը «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար

Արմինե Սիմոնյանը «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության գնահատման ծրագրի ղեկավար

Սիմոն Ղոնաղչյանը ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ

Հովհաննես Սահակյանը ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Պետրոս Դեմիրճյանը ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Մարինա Արզումանյանը ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից

Տիգրանուհի Բաղդասարյանը Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 11-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.
ա/ Հատկացման հայտ և եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
գ/ Աշխատանքային պլան,
դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,
ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում պոմպակայանների վերականգնման (IA/CB/CW-08/002) համար իրականացված մրցույթի նախաորակավորման արդյունքների և կարճ ցուցակի քննարկում և հաստատում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի շրջանակներում կնքվելիք վարկային պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
4. Այլ հարցեր`
ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողի առգրավման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի վերանայված ֆինանսական հաշվետվողականության պլանի քննարկում և հաստատում:
Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Յովսեփյանը:

Արա Յովսեփյանը ներկայացրեց, որ Հատկացումների 11-րդ հայտով ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը նախատեսում է գալիք եռամսյակի /ապրիլ – հունիս, 2009թ./ համար ՀՄԿ-ից ընդհանուր վճարային համակարգի միջոցով ստանալ ֆինանսավորում 7,993,939 ԱՄՆ դոլարի չափով:

Սիմոն Ղոնաղջյանը հայտնեց, որ համաձայն ներկայացված հաշվարկների ՀՄԿ-ի՝ մոտ 8 մլն. ԱՄՆ դոլար ֆինանսավորումից 715,000 ԱՄՆ դոլարը ծախսվելու է ծրագրի կառավարման և մոնիտորինգի ծախսերի ծածկման համար և հարցրեց, թե ինչպե՞ս է գնահատվում այս ծախսերի արդյունավետությունը:

Արա Յովսեփյանը պարզաբանեց, որ այդ գումարից 250,000 ԱՄՆ դոլարը տրամադրվելու է ֆինանսական մենեջմենթի համար, 109,949 ԱՄՆ դոլարը՝ ծրագրի ֆինանսական աուդիտի

համար, մնացածը՝ գրասենյակային շենքի վարձակալության և այլ վարչական ծախսերի համար:

Գուրգեն Սարգսյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստանի կողմից նախապես կառավարման խորհրդի անդամներին բաժանված հատկացման հայտի գումարի և նիստի ժամանակ տրամադրված տարբերակի մեջ կա էական գումարային տարբերություն և հարցրեց, թե ի՞նչն է այդ տարբերության պատճառը:

Արա Զովսեփյանը պարզաբանեց, որ վերանայված հատկացման հայտի մեջ ներառված չէ ճանապարհաշինության առաջին փաթեթով նախատեսված աշխատանքների հունիս ամսվա ֆինանսավորման համար նախատեսված 4.8 մլն. ԱՄՆ դոլարը, քանի որ ՀՄՀ-ի 2009թ. մարտի 11-ի խորհրդի նիստի ընթացքում որոշում է ընդունվել ևս մեկ եռամսյակով հետաձգել ճանապարհաշինության համար ֆինանսավորման տրամադրումը: Միաժամանակ տեղեկացվեց, որ ճանապարհաշինության առաջին փաթեթով նախատեսված աշխատանքների ֆինանսավորման համար ՀՄՀ-Հայաստանը՝ ՀՀ պետական բյուջեից տրամադրված 16.8 մլն. ԱՄՆ դոլարից դեռևս ունի միջոցներ, որոնք հնարավորության կտան ծածկել ապրիլ-մայիս ամիսների ծախսերը: Տվյալ ծրագրի շարունակման երկու տարբերակ կա. կամ շարունակել շինարարությունը նախատեսված պլանի համաձայն, որը հունիս ամսվա համար կհանգեցնի հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտության, կամ փորձել առկա միջոցներով արդեն սկսված ճանապարհահատվածներում ավարտել շինարարությունը և բերել վերջիններս երթևեկի վիճակի:

Տիգրան Դավթյանն առաջարկեց, որպեսզի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ համատեղ քննարկի և առաջարկի ծրագրի հետագա ընթացքի հնարավոր տարբերակները:

Գուրգեն Սարգսյանը նշեց, որ անհրաժեշտ է գտնել այնպիսի լուծում, որպեսզի գոնե արդեն իսկ կատարված աշխատանքների արդյունավետությունը չկորի: Միաժամանակ նշվեց, որ ժամանակ է անհրաժեշտ ճիշտ գնահատումներ անելու և հետագա քայլերի ընթացքը որոշելու համար:

Արա Զովսեփյանը տեղեկացրեց, որ ճանապարհաշինության առաջին փաթեթով նախատեսված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է մոտ 46.6 մլն. ԱՄՆ դոլար: Առաջին փաթեթում ընդգրկված գրեթե բոլոր ճանապարհահատվածներում աշխատանքներն արդեն իսկ սկսված են, բացառությամբ երկու՝ Կարճևան-Ագարակ և Չառիթափ-Մ2 ճանապարհահատվածների:

Հակոբ Պետրոսյանը նշեց, որ այդ երկու ճանապարհահատվածները ընդհանուր գումարի մեջ կազմում են ընդամենը 800 մլն. ՀՀ դրամ: Ընդհանուր նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է 14 մլրդ. ՀՀ դրամ՝ ներառյալ առկա 1 մլրդ. 400 մլն. ՀՀ դրամը:

Արա Զովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-ի հետ ձեռք է բերվել համաձայնություն մայիս ամսին՝ հունիս ամսվա համար անհրաժեշտ 4.8 մլն. ԱՄՆ դոլարի չափով արտահերթ հատկացման հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ այս հարցում վատատես չէ և կարծում է, որ ՀՄՀ-ն կտրամադրի այդ միջոցները, քանի որ Հայաստանի Հանրապետությունը այս երկու ամիսների ընթացքում առաջընթաց ցույց կտա:

Արա Զովսեփյանը ներկայացրեց տեղեկատվություն ՀՄՀ-Հայաստան ծրագրի կատարման նախապայմանների վերաբերյալ, մասնավորապես նշելով, որ ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան փոփոխություն, որը հնարավորություն է ընձեռնում ֆերմերներին ստեղծելու գյուղատնտեսական կոոպերացիաներ:

Արամայիս Գրիգորյանը հայտնեց, որ հանդգնած է, որ գյուղատնտեսական կոոպերացիաներ կստեղծվեն, սակայն անհրաժեշտ է ունենալ հստակ ծրագիր, որը կխթանի այդ կոոպերացիաների ստեղծումը:

Արա Յովսեփյանը ներկայացրեց, որ ՀՄԿ-ի հետ նախորդ եռամսյակում համաձայնություն էր ձեռք բերվել, որ տվյալ հատկացման հայտի հետ կներկայցվի նաև ՋՕԸ-երի ինքնաձախսածածակմանը վերաբերող կատարման նախապայմանի վերանայված տարբերակը, կամ վերանայված ցուցանիշները՝ համապատասխան հիմնավորմամբ: 10-րդ հատկացման հայտի հաստատման ժամանակ կառավարման խորհուրդը հանձնարարական էր տվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ քննարկելու այս հարցը և առաջարկելու նոր ցուցանիշներ:

Անդրանիկ Անդրեասյանը ներկաներին հայտնեց, որ հանձնարարականը կատարված է և համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվել են նոր ցուցանիշներ: Այդ ցուցանիշները տվյալ հատկացման հայտի հետ միասին պետք է ներկայացվեն ՀՄԿ-ի ուշադրությանը:

Երկու վերոնշյալ նախապայմանների վերաբերյալ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի առաջարկությամբ, ձեռք բերվեց համաձայնություն եռամսյակը մեկ անգամ անդրադառնալ վերջիններիս կատարման առաջընթացին:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 11-րդ Հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Յովսեփյանը:

Միաձայն որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում պոմպակայանների վերականգնման (IA/CB/CW-08/002) համար իրականացված մրցույթի նախատրակավորման արդյունքները և կարճ ցուցակը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Յովսեփյանը:

Արա Յովսեփյանը հայտնեց, որ համաձայն նախորդ միստի ընթացքում ընդունված որոշման՝ Վարկային պայմանագրում ավելացվել է հողի հարկի և ոռոգման ջրի վճարների մասով պարտավարություններ չունենալու պահանջը: Բացի այդ տեղեկացվեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը ՀՄԿ-ի հետ համատեղ քննարկել են և հանգել են այն հանդգնանք, որ անհրաժեշտ է վարկավորման առավելագույն շեմը 8.5 մլն. ՀՀ դրամի փոխարեն սահմանել 10.5 մլն. ՀՀ դրամ՝ հաշվի առնելով վերջին ժամանակներս գրանցված ՀՀ դրամի կտրուկ արժեզրկումը:

Հարցի ներկայացումից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի շրջանակներում կնքվելիք Վարկային պայմանագրի նախագիծը և որպես վարկավորման առավելագույն շեմ սահմանել 10.5 մլն. ՀՀ դրամը:

Օրակարգի 4-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության գնահատման ծրագրի ղեկավար Արմինե Սիմոնյանը:

Արմինե Սիմոնյանը տեղեկացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ինքնահոս համակարգերի և պոմպակայանների կառուցման համար, որոշ հատվածներում անհրաժեշտ է իրականացնել մասնավոր և համայնքային սեփականություն հանդիսացող հողի

Ժամանակավոր և մշտական առգրավում: Միանաժամանակ տեղեկացվեց, որ հարցը արդեն իսկ քննարկվել է ՀՀ փոխվարչապետի, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության, մասնավորապես՝ նախարարի տեղակալ Արտաշեն Բախշյանի հետ և խորհրդի առաջիկա նիստի քննարկմանը կներկայացվեն համապատասխան լուծումներ:

Արտաշեն Բախշյանը հավաստեց համատեղ քննարկումների փաստը և հաստատեց իր պատրաստակամությունը հետագա համագործակցության վերաբերյալ:

Միաձայն որոշվեց՝ ի գիտություն ընդունել «Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողի առգրավման վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 4-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Յովսեփյանը:

Միաձայն որոշվեց՝ հաստատել «Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի վերանայված ֆինանսական հաշվետվողականության պլանը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը